Հավելված N 1
Ապարան համայնքի ավագանու
24.05.2023թ N 56-Ա որոշման

Կ Ա Ր Գ
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ

1.Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքում (այսուհետ՝համայնք) տեղական տուրք և տեղական վճար վճարողների հաշվառման, գրանցամատյանների վարման կարգը և գրանցամատյանների ձևերը:
2.Տեղական տուրք և տեղական վճար վճարողների հաշվառումն իրականացվում է տեղական տուրք և տեղական վճար վճարողների գրանցամատյաններում (այսուհետ՝գրանցամատյան), ըստ տեղական տուրքերի և վճարների առանձին տեսակների.
3.Գրանցամատյանները դասակարգվում են՝
1) Տեղական տուրք վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձանց հաշվառման գրանցամատյաններ (Ձև 1),
2) տեղական վճար վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձանց հաշվառման գրանցամատյաններ (Ձև 2),
4.Գրանցամատյանները կարող են լինել փաստաթղթային և էլէկտրոնային (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով):
5.Գրանցամատյանները վարվում են Ապարանի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝Աշխատակազմ) համապատասխան ոլորտի բաժնում բաժնի պետի պատասխանատվությամբ:
6.Գրանցամատյանները վարվում են ըստ տարիների:
7.Փաստաթղթային ձևով վարվող Գրանցամատյանները էջակալվում, կարվում և կնքվում են աշխատակազմի կնիքով:
8.Գրանցամատյաններում առնվազն պետք է ներառվեն հետևյալ տվյալները՝
1)գրանցամատյանի վարման սկիզբը
2)տեղական տուրքի և վճարի տեսակը,
3)գրանցամատյանի վարման համար պատասխանատու բաժնի անվանումը և անձի անուն, ազգանունը, (ստորագրությունը),
4)տեղական տուրք կամ վճար վճարողների գրանցման հերթական համարը,
5)համայնքի ղեկավարի որոշման համարը և ամսաթիվը, որի հիման վրա գանձնվել է տուրքը կամ վճարը (լրացվում է առկայության դեպքում),
6) տեղական տուրքի կամ վճարի չափը,
7)ժամանակահատվածը, որի համար վճարվել է տեղական տուրք կամ վճար:
9.Տեղական տուրք կամ վճար վճարող ֆիզիկական անձնաց դեպքում
Գրանցամատյաններում (Ձև 1 և Ձև2) ներառվում են նաև՝
1)Ֆիզիկականանձիանունը, ազգանունը, հարանունը
2)հաշվառմանհասցեն
3)անձը հաստատող փաստաթղթերի տվյալները:
10.Տեղական տուրք և տեղական վճար վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերի դեպքում գրանցամատյաններում (Ձև 1 և Ձև2) ներառվում են նաև՝
1) իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը, կազմակերպաիրավական տեսակը,
2) գրանցման հասցեն,
3)գործունեության հասցեն
4)իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը,
5)հարկ վճարողի հաշվառման համարը:
11.Տվյալ տարվա համար փաստաթղթային ձևով վարված գրանցամատյանները ստորագրվում են պատասխանատու անձի կողմից և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը հանձնվում են աշխատակազմի արխիվ:
12.Գրանցամատյանները կարող են վարվել նաև այն համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում (ՀՈԱԿ), որտեղ գանձվում է տեղական տուրք կամ տեղական վճար.
13.ՀՈԱԿ-ներում տվյալ տարվա համար փաստաթղթային ձևով վարվող գրանցամատյաները էջակալվում, կարվում և կնքվում են համայնքապետարանի կնիքով և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը հանձնվում են աշխատակազմին:
14.Գրանցամատյանների Ձև 1-ը և Ձև 2-ը կցվում են: